



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՐԴ

ք. Երևան

02.06.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/05

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով «ՌԵԳՆՈՒՄ» ՍՊԸ-ի 15.05.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ բողոք) և կից նյութերը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 25.05.2017թ. ներկայացրած թիվ ԴՎԱ/1525 գրավոր դիրքորոշումը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 01.06.2017թ. ներկայացրած եզրակացությունը պարզեց հետևյալը.

1. «ՌԵԳՆՈՒՄ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«ՌԵԳՆՈՒՄ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 15.05.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

Ընկերությունը հայտ է ներկայացրել «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/2» ծածկագրով՝ բեռնատար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերման շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգով՝ 3 և 4 չափաբաժինների մասով:

Պատվիրատուի՝ ՀՀ պաշտպանության նախարարության՝ «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 19.04.2017թ. սկսված և 03.05.2017թ. ավարտված նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշման 2.3 կետով մերժել է Ընկերության հայտը՝ պատճառաբանելով, որ հայտով ներկայացված գնային առաջարկը սխալ է ներկայացված՝ մասնավորապես գնային

առաջարկում ԱԱՀ-ի հաշվարկը չի համապատասխանում ԱԱՀ-ի մասին օրենքի պահանջներին:

Ընկերությունը նշել է, որ ներկայացված գնային առաջարկում ԱԱՀ-ի հաշվարկը ներկայացված է «Ավելավցած արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածին համապատասխան, որի համաձայն՝ ԱԱՀ-ի դրույքաչափը սահմանվում է 20 տոկոս՝ ապրանքների ու ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ: Ապրանքների ու ծառայությունների լրիվ արժեքով հատուցման գումարի մեջ (ներառյալ 20 տոկոս դրույքաչափը) ԱԱՀ-ի գումարը որոշվում է 16,67 տոկոս հաշվարկային դրույքաչափով:

Ընկերությունը մեջբերել է՝ ՀՀ կառավարության 10 փետրվարի 2011թ. N 168-Ն «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» որոշման 48-րդ և 49-րդ կետերը.

«48. Մասնակցի գնային առաջարկը, որը ներառում է նաև ինքնարժեքի հաշվարկը, ներկայացվում է ինքնարժեք (վաճառքի ինքնարժեք), շահույթ և անուղղակի հարկեր ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա՝

1) անկախ պայմանագրի կատարման արդյունքում ձևավորված փաստացի ինքնարժեքի կամ շահույթի չափից, ստացված արդյունքի դիմաց հատուցումը (վճարումը) կատարվում է պայմանագրով նախատեսված չափով:

49. Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա մասնակցի ներկայացրած գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի չափը: Ընդ որում, բացառությամբ Հայաստանի Հանրապետության անունից կնքված համաձայնագրերով (պայմանագրերով) նախատեսված դեպքերի մասնակցի (մասնակիցների) գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման:»:

Ընկերությունը նշել է նաև, որ.

• «հրավերով նախատեսված գնային առաջարկը ներկայացնելու հավելված 4-ով, նախատեսվում է նույն սահմանումը, և որևէ տեղ հրավերով, կամ հայտերը լրացնելու հրահանգում, կամ ՀՀ ֆինանսների նախարարության հաստատած օրինակելի ձևերում նշված չէ, որ ԱԱՀ-ի դրույքաչափը պետք է լինի 20% դրույքաչափով՝ ինքնարժեքի և ակնկալվող շահույթի նկատմամբ, այլ ոչ թե 16.67% լրիվ արժեքով հատուցման գումարից,

ինչը ըստ էության և ըստ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի նույնն է:»:

• «Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը պահեստամասերի համար կազմել է 443.384.870 (չորս հարյուր քառասուններեք միլիոն երեք հարյուր ութսունչորս հազար 870 ՀՀ դրամ)՝ լրիվ արժեքով հատուցման գումար, որի մեջ ԱԱՀ-ն պետք է կազմի 16.67%՝ 73.912.258 ՀՀ դրամ, կամ որ նույնն է $443.384.870 \cdot 16.67\% = 73.912.258$ ՀՀ դրամ՝ ինչը արտացոլված է Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի հավելված 4.1-ով:

Տվյալ դեպքում պահեստամասերի ինքնարժեքը և ակնկալվող շահույթը կազմում է 369.472.612 (երեք հարյուր վաթսունինը միլիոն չորս հարյուր յոթանասուներկու հազար վեց հարյուր տասներկու) ՀՀ դրամ:»:

Ընկերությունը հարկ է համարել նշել նաև, որ հաղթող ճանաչված ընկերության՝ «Լավ Ընկեր» ՍՊԸ-ի, ներկայացրած գնային առաջարկն՝ ինքնարժեքը և ակնկալվող շահույթը, ըստ հավելված 4-ի, կազմել է 615.315.350 ՀՀ դրամ, որը Ընկերության ներկայացրած գնային առաջարկից ավելի է 245.842.738 ՀՀ դրամ (երկու հարյուր քառասունհինգ միլիոն ութ հարյուր քառասուներկու հազար յոթ հարյուր երեսունութե) ՀՀ դրամ, կամ 60.04%: ԱԱՀ-ն կազմել է 123.027.070 ՀՀ դրամ, ընդամենը գնային առաջարկը կազմել է պահեստամասերի համար՝ 738.162.420 ՀՀ դրամ, որը Ընկերության առաջարկած գնից ավելի է $738.162.420 - 443.384.870 = 294.777.550$ ՀՀ դրամ, կամ 60.07%:»:

Ընկերությունը որպես ներկայացված բողոքի փաստացի և իրավական հիմք ներկայացրել է հետևյալը.

Հանձնաժողովը սխալ է մեկնաբանել «Ավելավցած արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը, որի արդյունքում մերժվել է «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/2» ծածկագրով՝ բեռնատար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայության ձեռքբերման շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգով 3 և 4 չափաբաժիններով ներկայացված հայտերը:

ՀՀ կառավարության 10 փետրվարի 2011թ. «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» N 168-Ն որոշման 111-րդ կետին համապատասխան «ՌԵԳՆՈՒՄ» ՍՊԸ-ն կատարված խախտման մասին ահազանգել է ԳԱԿ թեժ գծի հեռախոսահամարին, սակայն անհասանելի է եղել, ինչպես նաև նշված ընթացակարգի գնումների համակարգող Ա. Բաղրամյանի a.baghramyan@mil.am էլ-փոստին է ուղղարկել Ընկերության դիրքորոշումը

հանձնաժողովի կայացրած որոշման կապակցությամբ, սակայն պաշտոնական պարզաբանում չի ստացել:

Ընկերությունը գտնում է, որ խախտվել և սխալ է մեկնաբանվել «Ավելավցած արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը, չնայած բարձրացված ահազանգի՝ հանձնաժողովը իր 06.05.2017թ. նիստով որոշել է սկսել պայմանագրի կնքման գործընթացը, որի մասին հայտարարություն է տեղադրվել կայքում:

Ընկերությունը որպես բողոքի ապացույց նշել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության՝ «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգով 3 և 4 չափաբաժիններով մասնակցելու համար Ընկերությունը հայտ է ներկայացրել և ներկայացրած հաշվարկներում պահպանել է «Ավելավցած արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջները, որի համաձայն՝ ԱԱՀ-ի դրույքաչափը սահմանվում է 20 տոկոս՝ ապրանքների ու ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ: Ապրանքների ու ծառայությունների լրիվ արժեքով հատուցման գումարի մեջ (ներառյալ 20 տոկոս դրույքաչափը) ԱԱՀ-ի գումարը որոշվում է 16,67 տոկոս հաշվարկային դրույքաչափով:

Ընկերությունը հայտնել է, որ բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքի վերաբերյալ բողոքարկման խորհրդի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ Ընկերության հետագա գործունեության վրա, ինչպես նաև ՀՀ գնումների մասին օրենսդրության միատեսակ կիրառության համար, մասնավորապես՝

- «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով ամրագրված սկզբունքների կիրառումը.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

- Նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակի իրագործման համար, գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Ընկերությունը գտնում է, որ առկա են գնումների գործընթացի, գնումների կարգավորող օրենսդրական այլ ակտերի պահանջների խախտումներ, կամ դրանց մեկնաբանություններ, որոնք հանգեցրել են գնումների մասնակիցների՝ գնումների մասնակցելու իրավունքի խախտման:

Ընկերությունը նշել է, որ վերջինիս կարծիքով Հանձնաժողովի գործելակերպը միտված է եղել հնարավորինս կրճատելու բողոքարկման խորհուրդ դիմելու հնարավորությունները, քանի որ.

- եթե հայտերի բացման նիստը՝ մինչև հաղթողին որոշելու մասին որոշման հրապարակումը տեղի է ունեցել անհարկի ձգձգումներով՝ 19.04.2017-03.05.2017թ., ապա պայմանագիր կնքելու մասին որոշումը անհասկանալի արագությամբ և օպերատիվությամբ է կատարվել,

- մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ 06.05.2017թ., կայացվել է որոշում, երբ անհրաժեշտ էր ստանալ նաև ՀՀ ֆինանսների նախարարության հարցումների պատասխանը, որոնք հավանաբար ստացվել են մեծ օպերատիվությամբ,

- անգործության ժամկետ է սահմանվել 10 օրացուցային օր՝ 16.05.2017թ. ներառյալ, բողոք ներկայացնելու վերջնաժամկետը,

- որոշումը տեղադրվել է gnumner.am կայք 06.05.2017թ. երեկոյան,

- հաջորդ 3 օրերը ոչ աշխատանքային են եղել՝ մայիսի 7-ը, 8-ը, 9-ը և ևս 2օր՝ մայիսի 13-ը և 14-ը նույնպես եղել են ոչ աշխատանքային օրեր և մնացած 5 աշխատանքային օրերը գուցե բավարար չլինեին բողոք ներկայացնելու համար:

Ընկերությունը, գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է՝

1. Դադարեցնել գնահատող հանձնաժողովի 19.04.2017թ. սկսված և 03.05.2017թ. ավարտված նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշումը՝ Ընկերության հայտը մերժելու մասին որոշումը,

2. Դադարեցնել գնահատող հանձնաժողովի 19.04.2017թ. սկսված և 03.05.2017թ. ավարտված նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշումը՝ 3-րդ չափաբաժնով «Լավ Ընկեր» ՍՊԸ-ին 1-ին տեղ ճանաչելու մասին որոշումը,

Կայացնել ժամանակավոր միջոց կիրառելու մասին որոշում՝ դադարեցնել գնահատող հանձնաժողովի կողմից 06.05.2017թ. կայացված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Ընկերությունը 18.05.2017թ. թիվ Դ-076 գրությամբ՝ ի լրումն բողոքում նշված ապացույցների, հայտնել է հետևյալը.

«Համաձայն «Ավելացված արժեքի մասին» ՀՀ օրենքի.

• Հոդված 5. ԱԱՀ-ով հարկվող օբյեկտ է համարվում Հայաստանի Հանրապետության տարածքում ԱԱՀ վճարողների կողմից իրականացվող սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված բոլոր գործարքների (գործառնությունների) ամբողջ արժեքը (շրջանառությունը), եթե օրենքով այլ բան չի նախատեսված:

• Հոդված 8. ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը (հարկման բազան) որոշվում է հետևյալ կարգով,

1) ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման դեպքերում (բացառությամբ սույն հոդվածով սահմանված դեպքերի) ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում դրանց արժեքը դրամական արտահայտությամբ (ներառյալ՝ այդ արժեքին օրենքով միացվող այլ վճարումները)՝ առանց ԱԱՀ-ի, որը գնորդը պետք է վճարի մատակարարին որպես հատուցում:

• Հոդված 9. ԱԱՀ-ի դրույքաչափը սահմանվում է 20 տոկոս՝ ապրանքների ու ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ: Ապրանքների ու ծառայությունների լրիվ արժեքով հատուցման գումարի մեջ (ներառյալ 20 տոկոս դրույքաչափը) ԱԱՀ-ի գումարը որոշվում է 16,67 տոկոս հաշվարկային դրույքաչափով: Համաձայն «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ- ՇՀԾՁԲ-4/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի գնային առաջարկի 4-րդ հավելվածի ծանոթագրություններով՝

«Եթե Մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում: Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ ծառայությունների յուրաքանչյուր չափաբաժնի համար առաջարկվող ընդհանուր գումարով, ընդ որում Հավելված N 4-ում լրացվում է Հավելված 4.1-ի /Հրավերին կից ներկայացված է Excel տարբերակով/ ընդամենը ստացվող միավորի գների հանրագումարը: Հավելված 4.1 պարտադիր լրացվում և կցվում է Հավելված 4-ին:»: Հետևաբար՝ հավելված 4-ի աղյուսակ 5-ում արտացոլված՝ Առաջարկված ընդհանուր գինը՝ տառերով և թվերով՝

պետք է համընկներ հավելված 4.1-ում ստացված ընդամենը ստացվող միավորի գների հանրագումարին, ինչը լրիվ արժեքով հատուցման գումարն է և որտեղ ԱԱՀ-ի դրույքաչափը պետք է լինի 16.67 տոկոս հաշվարկային դրույքաչափով: Սկզբից պետք է կազմվի հավելված 4.1-ը, ստացվի ընդամենը ստացվող միավորի գների հանրագումարը, որը և լրիվ արժեքով հատուցման գումարն է, այն տեղադրվի հավելված 4-ի աղյուսակի 5-րդ սյունակում, այնուհետև «հետհաշվարկի» միջոցով որոշվի ԱԱՀ-ի գումարը՝ 5-րդ սյունակ $\times$ 16.67 տոկոս, այնուհետև լրացվի աղյուսակի 3-րդ սյունակը՝ ԱՐԺԵՔ (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումար), որը կլինի 5-րդ սյունակ-4-րդ սյունակ, որից հետո կստացվի $5=3+4$ »:

Ընկերությունը 26.05.2017թ. թիվ Դ-081 գրությամբ Խորհրդին է ներկայացրել Ընկերության 16.05.2017թ. թիվ Դ-074 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարին կատարված հարցման պատասխանը, որով խնդրել է պարզաբանել Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի՝ «Ավելավցած արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքին համապատասխանությունը կամ հակասությունը:

Ի պատասխան Ընկերության վերոհիշյալ գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 25.05.2017թ. թիվ 03/73-3/9231-17 գրությամբ հայտնել է, հետևյալը.

«Ավելավցած արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն, ԱԱՀ-ի դրույքաչափը սահմանվում է 20 տոկոս՝ ապրանքների ու ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ: Միաժամանակ, նույն հոդվածի 2-րդ պարբերության համաձայն, ապրանքների ու ծառայությունների լրիվ արժեքով հատուցման գումարի մեջ (ներառյալ 20 տոկոս դրույքաչափը) ԱԱՀ-ի գումարը որոշվում է 16,67 տոկոս հաշվարկային դրույքաչափով: Այսինքն, ըստ էության, «Ավելավցած արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված է ԱԱՀ-ի գումարի չափի որոշման երկու դրույքաչափ (մոտեցում): Առաջին դրույքաչափը ԱԱՀ-ի հիմնական դրույքաչափն է, որը կիրառվում է ապրանքների ու ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ, իսկ երկրորդ դրույքաչափը հաշվարկային դրույքաչափ է, որը կիրառվում է ապրանքների ու ծառայությունների լրիվ արժեքով հատուցման գումարի մեջ ԱԱՀ-ի գումարի մեծությունը որոշելու համար: Ընդ որում հարկ է նկատել, որ երկու դրույքաչափով ԱԱՀ-ի գումարի չափը որոշելու դեպքերում էլ պետք է ստացվեն ԱԱՀ-ի միևնույն գումարները: Վերոգրյալը հիմնավորվում է այն հանգամանքով, որ ԱԱՀ-ի հաշվարկային դրույքաչափը կիրառվում է ապրանքների ու ծառայությունների լրիվ արժեքով հատուցման գումարի նկատմամբ՝ պարզելու համար այն ԱԱՀ գումարի մեծությունը, որը պետք է հավասար լինի ապրանքների

ու ծառայությունների հարկվող շրջանառության (առանց ԱԱՀ-ի) նկատմամբ ԱԱՀ-ի հիմնական դրույքաչափ (20 տոկոս) կիրառելու արդյունքում ստացվող ԱԱՀ-ի գումարին: «Ավելավցած արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով ամրագրված՝ ԱԱՀ-ի հաշվարկային դյուրաչափը թվաբանական կլորացման արդյունք է և վերոնշյալ սկզբունքով հաշվարկելու դեպքում այդ դրույքաչափը հավասարվում է ոչ թե 16,67 տոկոսի, այլ 16,666666667%-ի:

Նախարարությունն ուսումնասիրելով Ընկերության կողմից ներկայացրած գնային առաջարկը հայտնել է, որ Ընկերությունը ԱԱՀ-ի գումարը (օրինակ՝ 73,912,258 ՀՀ դրամը) հաշվարկել է ԱԱՀ-ի հաշվարկային դրույքաչափով ընդհանուր գնի նկատմամբ (օրինակ՝ $443,384,870 \cdot 16,67$ տոկոս), իսկ ապրանքի արժեքը (օրինակ՝ 369,472,612 ՀՀ դրամը) հաշվարկել է ընդհանուր գնի և դրա նկատմամբ ԱԱՀ հաշվարկային դրույքաչափով հաշվարկված ԱԱՀ-ի գումարի տարբերությամբ ($443,384,870 - 73,912,258$):

Ինչ վերաբերում է գնահատող հանձնաժողովի այն նկատառմանը, որ Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկում ԱԱՀ-ի հաշվարկը չի համապատասխանում «Ավելավցած արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի պահանջներին, Նախարարությունը հայտնել է, որ նման անհամապատասխանությունը այն բանի արդյունք է, որ ընկերությունը ԱԱՀ-ի գումարը հաշվարկել է կլորացված ԱԱՀ-ի հաշվարկային դրույքաչափով (16,67 տոկոս) և եթե կիրառվեր ԱԱՀ-ի չկլորացված հաշվարկային դրույքաչափ, ապա նման անհամապատասխանություններ չէր լինի:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ նախարարությունը գտնում է, որ Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկում ներառված ԱԱՀ-ի գումարի հաշվարկը չի հակասում «Ավելավցած արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի պահանջներին:»:

Խորհրդում 17.05.2017թ. ժամը 12:00-ին N ԳԲԽ-ԷՍ-2017/05 բողոքի քննության նիստին ներկայացել էին Ընկերության հիմնադիր Գուրգեն Ֆրանգույանը և փոխտնօրեն Կարո Կապլանյանը: Վերջիններս ներկայացված բողոքը պնդեցին ամբողջությամբ:

2. ՀՀ Պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

ՀՀ Պաշտպանության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 17.05.2017թ. Խորհրդին ներկայացրել է դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/2» ծածկագրով մրցույթին «ՌԵԳՆՈՒՄ» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը սխալ է ներկայացված՝ մասնավորապես գնային առաջարկում ԱԱՀ-ի հաշվարկը չի համապատասխանում ԱԱՀ-ի մասին օրենքի պահանջներին»:

Խորհրդի 17.05.2017թ. նիստին մասնակցում էր Պատվիրատուի ներկայացուցիչ՝ ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության՝ սպառազինության և ռազմական տեխնիկայի՝ գնումների փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ՝ Բաղդամյան Արմանը և ՀՀ պաշտպանության նախարարության տեխնիկական ապահովման վարչության առաջատար մասնագետ՝ Սիմոնյան Արմենը: Արմեն Սիմոնյանը նիստի ընթացքում Խորհրդին հայտնեց, որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացրած որոշումը պայմանավորված է նրանով, որ «ՌԵԳՆՈՒՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկը ներառում է ԱԱՀ-ի գումարի առանձնացում և այն արտացոլված է ԱԱՀ-ի հաշվարկի համապատասխան տողում, որը չի կազմում «Ավելավցած արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված 20 տոկոս դրույքաչափը:

Պատվիրատուն 25.05.2017թ. թիվ ԴՎԱ/1525 գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

««Ավելավցած արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ-ի դրույքաչափը սահմանվում է 20 տոկոս՝ ապրանքների ու ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ: Ապրանքների ու ծառայությունների լրիվ արժեքով հատուցման գումարի մեջ (ներառյալ 20 տոկոս դրույքաչափը) ԱԱՀ-ի գումարը որոշվում է 16,67 տոկոս հաշվարկային դրույքաչափով: Եթե անձը օրենքի խախտմամբ իրեն չի համարել ԱԱՀ վճարող կամ ԱԱՀ վճարող համարվող անձը ԱԱՀ-ով հարկվող գործարքների գծով դուրս գրված հաշվարկային փաստաթղթում ԱԱՀ-ի գումարի առանձնացում չի կատարել կամ հաշվարկային փաստաթուղթ դուրս չի գրել և միաժամանակ նշված դեպքերում ԱԱՀ վճարող համարվող անձը ԱԱՀ-ի գումարը չի արտացոլել ԱԱՀ-ի հաշվարկի համապատասխան տողերում, ապա ԱԱՀ-ի գումարը հաշվարկվում է ԱԱՀ-ի 20 տոկոս դրույքաչափի կիրառմամբ:

«ՌԵԳՆՈՒՄ» ՍՊԸ-ի կողմից, սահմանված կարգով, ներկայացրած գնի առաջարկը (հաշվարկային փաստաթուղթ) ներառում է ԱԱՀ-ի գումարի առանձնացում և այն արտացոլվում է ԱԱՀ-ի հաշվարկի համապատասխան տողում և որը չի կազմում սահմանված 20 տոկոսը:

Պատվիրատուն նշել է, որ ներկայացված բողոքում բարձրացված՝ «ՌԵԳՆՈՒՄ» ՍՊԸ-ի և «Լավ Ընկեր» ՍՊԸ-ի առաջարկած գումարի 294 777 550 ՀՀ դրամի տարբերության մասով, 3-րդ չափաբաժնով նախատեսված առավելագույն գումարը կազմում է 65 943 400 ՀՀ դրամ և պայմանագիրը կնքվելու է առավելագույն գումարով, հետևաբար անհիմն է և անհեթեթ այն հայտարարությունը, որ պետական բյուջեն կտուժի 294 777 550 ՀՀ դրամով:

«ՌԵԳՆՈՒՄ» ՍՊԸ-ի կողմից գնային առաջարկին կից ներկայացված 4.1 հավելվածում թվով 8 անվանում ավտոպահեստամասերի մասով ներկայացվել են 0 դրամ և շուրջ 1370 անվանում ավտոպահեստամասերի գները գերազանցում են տվյալ տողի համար հատկացված ֆինանսական միջոցների չափը՝ ինչը արհեստածին է, հիմնավորված չէ և մտահոգության տեղիք է տալիս: Վերոգրյալի հիման վրա Պատվիրատուն գտնում է, որ «ՌԵԳՆՈՒՄ» ՍՊԸ-ի բողոքը անհիմն է և ենթակա չէ բավարարման:»:

3. ԳԲԽ-ԷՍ-2017/05 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԷՍ-2017/05 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/2» ծածկագրով՝ բեռնատար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերման շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ հանձնաժողով) կողմից 2017 թվականի ապրիլի 07-ի թիվ 1 որոշմամբ հաստատված և հրապարակված N «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետև՝ հրավեր),

2. Հրավերի NN 4 և 4.1 հավելվածները,

3. Հանձնաժողովի 2017թ. ապրիլի 19-ի թիվ 3 արձանագրությունը,

4. Գնահատող հանձնաժողովի 2017թ. մայիսի 06-ի կայացրած որոշումը,

5. Պատվիրատուի դիրքորոշումը,

6. Խորհրդի նիստերի ընթացքում Պատվիրատուի և Ընկերության ներկայացուցիչների կողմից արտահայտած կարծիքները և դիրքորոշումները:

7. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից 01.06.2017թ. ներկայացրած եզրակացությունը:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդը ուսումնասիրել է «ՌԵԳՆՈՒՄ» ՍՊԸ-ի 15.05.2017թ. ներկայացրած բողոքը, Պատվիրատուի ներկայացրած փաստաթղթերը, N «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը, Պատվիրատուի ներկայացուցչի ներկայացրած դիրքորոշումը և կարծիքը, Պատվիրատուի կողմից 25.05.2017թ. Խորհրդին ներկայացրած դիրքորոշումը, Ընկերության ներկայացուցչի ներկայացրած դիրքորոշումը և կարծիքը, Ընկերության կողմից 18.05.2017թ. Խորհրդին ներկայացրած դիրքորոշումը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 01.06.2017թ. տրամադրած եզրակացությունը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը բեռնատար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով 07.04.2017թ. հայտարարել է N «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

«ՌԵԳՆՈՒՄ» ՍՊԸ-ն կազմակերպված ընթացակարգի 3-րդ և 4-րդ չափաբաժիններին մասնակցելու նպատակով ներկայացրել հայտ:

Ընկերության կողմից ներկայացրած հայտը հանձնաժողովի կողմից 2017թ. ապրիլի 19-ի թիվ 3 արձանագրությամբ մերժվել է հետևյալ հիմնավորմամբ.

«Ընկերության կողմից հայտով ներկայացված գնային առաջարկը սխալ է ներկայացված՝ մասնավորապես գնային առաջարկում ԱԱՀ-ի հաշվարկը չի համապատասխանում ԱԱՀ-ի մասին ՀՀ օրենքի պահանջներին»:

Խորհուրդն, ստացված բողոքով համապատասխան որոշում կայացնելու նպատակով, 20.05.2017թ. գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե՝ խնդրելով ՀՀ Գնումների բողոքարկման խորհրդին տրամադրել եզրակացություն այն մասին, արդյո՞ք «ՌԵԳՆՈՒՄ» ՍՊԸ-ի ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված գնային առաջարկում ավելացված արժեքի հարկի գումարը ճիշտ է հաշվարկված, թե՛ ոչ, կցելով գնային առաջարկը:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն ի պատասխան Խորհրդի 20.05.2017թ. թիվ ԳԲԽ-1/2/8823-17 գրության հայտնել է, որ հիմք ընդունելով Եղեգնաձորի ՏՀՏ-ի 29.05.2017թ. գրությամբ տրամադրած տեղեկատվությունը՝ «ՌԵԳՆՈՒՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում ավելացված արժեքի հարկի գումարը ճիշտ է հաշվարկված:

Բացի այդ, Ընկերությունը 26.05.2017թ. թիվ Դ-081 գրությամբ Խորհրդին է ներկայացրել Ընկերության 16.05.2017թ. թիվ Դ-074 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարին կատարված հարցման պատասխանը, որով խնդրել է պարզաբանել Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի՝ «Ավելավցած արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքին համապատասխանությունը կամ հակասությունը:

Ի պատասխան Ընկերության վերոհիշյալ գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 25.05.2017թ. թիվ 03/73-3/9231-17 գրությամբ հայտնել է, որ նախարարությունը գտնում է, որ Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկում ներառված ԱԱՀ-ի գումարի հաշվարկը չի հակասում «Ավելավցած արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

«Ավելավցած արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն, ԱԱՀ-ի դրույքաչափը սահմանվում է 20 տոկոս՝ ապրանքների ու ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ: Նույն հոդվածի 2-րդ պարբերության համաձայն, ապրանքների ու ծառայությունների լրիվ արժեքով հատուցման գումարի մեջ (ներառյալ 20 տոկոս դրույքաչափը) ԱԱՀ-ի գումարը որոշվում է 16,67 տոկոս հաշվարկային դրույքաչափով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 31-րդ հոդվածի.

- 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

- 2-րդ մասի 1)-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 10.02.2011 թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) 35-րդ կետի 2)-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Այսպիսով, Խորհուրդը հիմք ընդունելով Կարգի 35-րդ կետի 2)-րդ ենթակետով սահմանված պահանջները, ՀՀ ֆինանսների նախարարության 25.05.2017թ. թիվ 03/73-3/9231-17 և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 01.06.2017թ. գրություններով տրամադրած եզրակացությունները, Խորհուրդը գտնում է, որ գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով և 2-րդ մասի 1)-ին կետով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2)-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ՌԵԳՆՈՒՄ» ՍՊԸ -ի 15.05.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել:

2. Դադարեցնել «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից՝

- 2017թ. ապրիլի 19-ի թիվ 3 արձանագրությամբ «ՌԵԳՆՈՒՄ» ՍՊԸ -ին մերժելու մասին որոշումը,

- 2017թ. ապրիլի 19-ի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշումը՝ 3-րդ չափաբաժնով «Լավ Ընկեր» ՍՊԸ-ին 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը,

- 2017թ. մայիսի 6-ին կայացված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն պայմանագիր կնքելու մասին որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման

խորհրդի անդամ՝



ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ